ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» փետրվարի 2024 թվականի N: 41 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 154-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը սահմանելու, ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց նշանակելու մասին» N 154-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, հիմնական մասում և հավելվածներում «մարզպետարան» բառն իր հոլովաձևերով փոխարինել «մարզպետի աշխատակազմ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

2) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «պետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող» բառերը փոխարինել «պետ» բառով:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է